ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԻՋԵՎԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ

ՈՐՈՇՈՒՄ N 62/8

01-ը հոկտեմբերի, 2022թ.

«Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհրդի 2021 թվականի նոյեմբերի 30-ի թիվ 55/2 որոշմամբ հաստատված ««Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղում հետազոտական աշխատանքների պատրաստման և գնահատման կարգը» նոր խմբագրությամբ հաստատելու մասին

Ղեկավարվելով «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի կանոնադրության 21-րդ կետի 4-րդ ենթակետով և «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհրդի կանոնակարգի 4-րդ կետի 4-րդ ենթակետով՝ «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհուրդը որոշում է.

1. Հաստատել «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհրդի 2021 թվականի նոյեմբերի 30-ի թիվ 55/2 որոշմամբ հաստատված ««Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղում հետազոտական աշխատանքների պատրաստման և գնահատման կարգը» նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:

2. Սույն կարգը տարածվում է 2022/2023 ուսումնական տարում և դրանից հետո «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղ ընդունված ուսանողների վրա:

3. Որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ԵՊՀ ԻՄ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝_____ Ա. Հ. ՄԱԿԱՐՅԱՆ

Հավելված

Հաստատված է

ԵՊՀ ԻՄ-ի գիտական խորհրդի

2022թ. հոկտեմբերի 01-ի նիստի թիվ 62/8 որոշմամբ

ԵՊՀ ԻՄ-ի գիտական խորհրդի նախագահ_____Ա. Հ. Մակարյան

«ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԻՋԵՎԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂՈՒՄ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԵՎ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԿԱՐԳ (նոր խմբագրություն)

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1. Սույն կարգով սահմանվում է «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղում (այսուհետ՝ ԵՊՀ ԻՄ կամ Մասնաճյուղ) հետազոտական աշխատանքների պատրաստման և գնահատման կարգը:

1.2. Կարգը մշակվել է «Կրթության մասին» և «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքների, ԵՊՀ և ԵՊՀ ԻՄ-ի կանոնադրությունների, ԵՊՀ ԻՄ 2016-2020թթ. զարգացման ռազմավարական ծրագրի, «ԵՊՀ-ի բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերի մասնագիտական դասընթացներում հետազոտական աշխատանքի կատարման» կարգի (12.03.2020, ԵՊՀ ԳԽ) հիման վրա:

1.3. ԵՊՀ ԻՄ-ում ուսանողները հետազոտական աշխատանքներ կատարում են բակալավրատի՝ 4-7-րդ կիսամյակների ընթացքում՝ առնվազն երկու, առավելագույնը՝ 6-ը, իսկ մագիստրական կրթական ծրագրում՝ սկսած առաջին կիսամյակից:

1.4. Հետազոտական աշխատանքի թեման մեկ կամ մի քանի խնդիրների մշակումն է:

1.5. Հետազոտական աշխատանք կատարում են կրթական ծրագրում ընտրված դասընթացն ուսումնասիրող բոլոր ուսանողները:

1.6. Հետազոտական աշխատանքի ամբողջ ծրագրի ղեկավարումն իրականացնում է դասընթացը վարող դասախոսը:

1.7. Հետազոտական աշխատանքների թեմաները հաստատում են համապատասխան կամ տվյալ կրթական ծրագիրն իրականացնող մասնագիտական ամբիոնները:

1.8. Հետազոտական աշխատանքի հաստատված թեմայի փոփոխություն թույլատրվում է բացառիկ դեպքերում՝ ուսանողի հիմնավորված բացատրագրի հիման վրա, ղեկավարի և ամբիոնի վարիչի համաձայնությամբ, ամբիոնի նիստի որոշմամբ:

1.9. Հետազոտական աշխատանքների պլանները և ընթացիկ արդյունքները քննարկվում են համապատասխան ամբիոնում:

1.10. Հետազոտական աշխատանքը պատրաստվում է գրավոր տեսքով և ներկայացվում ղեկավար դասախոսին:

1.11. Հետազոտական աշխատանքի կազմակերպման համար ղեկավարը կազմում և ամբիոն է ներկայացնում ուսանողների հետ անհատական ու խմբային հանդիպումների ժամանակացույց:

1.12. Հետազոտական աշխատանքի արդիականության, մասնագիտական ուղղությանը թեմատիկ համապատասխանության, աշխատանքի ղեկավարման և կատարման համար պատասխանատու է մասնագիտական ամբիոնը և աշխատանքի անմիջական ղեկավարը, իսկ աշխատանքում շարադրված բոլոր տեսակետների, ընդունած որոշումների և բոլոր տվյալների ճշգրտության համար պատասխանատու է ուսանողը՝ աշխատանքի հեղինակը:

1.13. Դասընթացի ավարտին ղեկավարը ամբիոն է ներկայացնում հետազոտական աշխատանքների իրականացման մասին հաշվետվություն:

2. ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՆՊԱՏԱԿՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

2.1. **Հետազոտական աշխատանքի իրականացման նպատակն է** խթանել ուսանողի անհատական և խմբային հետազոտություն կատարելու ունակությունները և նպաստել նրա մասնագիտական հմտությունների զարգացմանը:

2.2. ԵՊՀ Իջևանի մասնաճյուղն ակնկալում է պատրաստել այնպիսի մասնագետներ, որոնք կունենան մասնագիտական խորը գիտելիքներ, ունակ կլինեն մասնագիտական շրջանակներում կիրառելու հետազոտության նորագույն մեթոդներն ու տեխնոլոգիաները, մեկնաբանելու նորագույն տեսությունները և հետազոտության արդյունքները:

2.3. **Հետազոտական աշխատանքի իրականացման խնդիրներն են՝ ուսանողի մոտ**

2.3.1. ձևավորել մասնագիտական հետազոտական մտածողություն ու մտածելակերպ, հիմնական մասնագիտական խնդիրների հստակ պատկերացումներ,

2.3.2. ամրապնդել և խորացնել տեսական գիտելիքներն ու մասնագիտական կարողությունները,

2.3.3. ձևավորել ինքնուրույն հետազոտական աշխատանք կատարելու կարողություններ,

2.3.4. ձևավորել տեղեկատվության հավաքագրման ու ստացված փորձագիտական տվյալների մշակման ու մեկնաբանման ժամանակակից տեխնոլոգիաներ կիրառելու կարողություններ,

2.3.5. ձևավորել հետազոտությունների արդյունքների վերլուծության, մեկնաբանման, ստացված արդյունքների հիման վրա հետևություններ կատարելու և առաջարկներ ներկայացնելու կարողություններ:

3. ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԽՈՐՀՐԴԱՏՎՈՒԹՅՈՒՆ, ՂԵԿԱՎԱՐՈՒՄ ԵՎ ԿԱՏԱՐՈՒՄ

3.1. Աշխատանքի ղեկավարի խորհրդատվական պարտականություններն են՝ աջակցել ուսանողին.

3.1.1. հետազոտական աշխատանքի թեմայի ընտրության և թեմայի շուրջ աշխատելու պլանի մշակման գործում,հետազոտական աշխատանքից բխող խնդիրներն առանձնացնելու և դրանց լուծման համար հանձնարարություններ առաջադրելու գործում,

3.1.2. աշխատանքի նպատակի ու խնդիրների ձևակերպման և հետազոտության մեթոդների ընտրության հարցում,

3.1.3. գրականության և մեթոդական նյութերի ընտրության գործում,

3.2. Աշխատանքի ղեկավարը պարտավոր է.

3.2.1. իրականացնել պարբերական հանդիպումներ ուսանողների հետ և համակարգված վերահսկել աշխատանքի կատարման ողջ ընթացքը,

3.2.2. գնահատել հետազոտական աշխատանքը՝ համաձայն ներկայացվող պահանջների: (Տե՛ս Հավելված 5)

3.3. Հետազոտական աշխատանքի կատարման գործընթացում ուսանողի պարտականություններ են՝

3.3.1. Ինքնուրույն գնահատել թեմայի արդիականությունը և նշանակությունը,

3.3.2. ձևակերպել աշխատանքի նպատակն ու խնդիրները,

3.3.3. ղեկավարի հետ համատեղ առանձնացնել աշխատանքից բխող խնդիրները և կազմել դրանց լուծման հետ կապված հանձնարարությունները,

3.3.4. հավաքել և մշակել անհրաժեշտ տեղեկատվությունը, ուսումնասիրել և վերլուծել հավաքագրված տվյալները,

3.3.5. կատարել հետազոտություններ, մշակումներ,

3.3.6. ձևակերպել տրամաբանորեն հիմնավորված եզրակացությունները, կատարել առաջարկներ ստացված արդյունքները գործնականում կիրառելու վերաբերյալ,

3.3.7. պարբերաբար ներկայացնել հաշվետվություն կատարած աշխատանքի մասին,

3.3.8. կազմել հետազոտական աշխատանքի գրավոր տարբերակը և այն ժամանակին ներկայացնել ղեկավարին:

4. ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՏԱՐՐԵՐԸ ԵՎ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԻՄՆԱԿԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

4.1. Հետազոտական աշխատանքի կառուցվածքային տարրերն են.

1) Տիտղոսաթերթ (Տե՛ս Հավելված 2),
2) Բովանդակություն (Տե՛ս Հավելված 3),
3) Ներածություն,
4) Հիմնական մաս (գլուխ, մաս, բաժին),
5) Եզրակացություն/հետևություններ,
6) Օգտագործված գրականության ցանկ (Տե՛ս Հավելված 4),
7) Հավելված(ներ) ըստ անհրաժեշտության։

4.2. Կառուցվածքային տարրերի բոլոր վերնագրերը պետք է տեղադրել տողի կենտրոնում և գրել գլխատառերով:

4.3. Յուրաքանչյուր կառուցվածքային տարր սկսվում է նոր էջից, տիտղոսաթերթը չի համարակալվում:

4.4. **Հետազոտական աշխատանքի բովանդակությունը** պետք է համապատասխանի աշխատանքի տեքստին:

4.5. **Բովանդակությունում նշվում է նրա կառուցվածքը՝**

1) ներածություն,
2) հիմնական մաս (բաղկացած բաժիններից և ենթաբաժիններից, եզրակացություն, գրականության ցանկ, հավելվածներ)՝ յուրաքանչյուր մասի էջերի նշմամբ:

4.6. **Հետազոտական աշխատանքի ներածությունը պետք է պարունակի՝**

1) թեմայի արդիականության հիմնավորումը,
2) աշխատանքի նպատակների ու խնդիրների ներկայացումը,
3) կիրառվող հետազոտական մեթոդների նկարագրությունը։

4.7. **Հետազոտական աշխատանքի հիմնական մասը** պետք է ներառի բաժիններ, որոնք պարունակում են օգտագործված գրականության ակնարկը, արտահայտում են առաջադրանքին համապատասխանող հիմնական խնդիրների էությունը, լուծման համար կիրառված մեթոդիկան, լուծումը և աշխատանքի հիմնական արդյունքները:

4.8. **Եզրակացությունը** պետք է պարունակի աշխատանքի արդյունքներին վերաբերող հակիրճ դատողություններ և բովանդակային առումով պետք է համապատասխանի ներածության մեջ առաջադրված խնդիրներին:

4.9. **Օգտագործված գրականության ցանկում** պետք է վկայակոչել բոլոր այն հեղինակների աշխատությունները և համացանցում հրապարակված նյութերը, որոնք օգտագործվել են հետազոտական աշխատանքը գրելիս՝ պահպանելով ակադեմիական ազնվության սկզբունքները: Օգտագործված գրականության ցանկի պատրաստման մանրամասները ներկայացված են սույն կարգի 5.4 կետում և Հավելված 4-ում:

4.10. **Հավելվածները** հետազոտական աշխատանքի հիմնական մասը լրացնող նյութերն են: Որպես հավելված՝ ներառվում են կատարված աշխատանքին վերաբերող այն նյութերը, որոնք ինչ-ինչ պատճառներով չեն ընդգրկվել հիմնական մասում (հաշվարկներ, աղյուսակներ, գրաֆիկներ, համակարգչային ծրագրեր և այլն):

1) Տեքստում բոլոր հավելվածների վերաբերյալ պետք է վկայակոչումներ արվեն: (Հավելվածները վկայակոչելիս պարտադիր օգտագործում են «համաձայն --- հավելվածի» արտահայտությունը):
2) Յուրաքանչյուր հավելված սկսվում է նոր էջից, որի վերին մասի կենտրոնում գրվում է ՀԱՎԵԼՎԱԾ բառը գլխատառերով:

<u>Աղյուսակ 1.</u> Հետազոտական աշխատանքի օրինակելի կառուցվածքը և ներկայացվող պահանջները

Կառուցվածքը	**Ներկայացվող պահանջները**
Տիտղոսաթերթ	Տիտղոսաթերթը լրացվում է համաձայն Հավելված 2-ում ներկայացված ձևաչափի:
Բովանդակություն	Ըստ հերթականության առանձին ցանկով ներկայացվում են աշխատանքի բոլոր բաժինները, դրանց համապատասխան էջերը, ինչպես նաև հավելվածները (առկայության դեպքում),
Ներածություն	Ներկայացվում են աշխատանքի

	արդիականությունը, նպատակն ու խնդիրները, ուսումնասիրության օբյեկտը և առարկան, տեսական և /կամ կիրառական նշանակությունը:
Հիմնական մաս	Աշխատանքի հիմնական մասը բաղկացած է գլուխներից և ենթագլուխներից: Այն ներառում է օգտագործված գրականության և ուսումնասիրվող հիմնախնդրի վերլուծությունը, կիրառված մեթոդների և կատարված հետազոտության նկարագրությունը, ուսումնասիրության արդյունքների շարադրումը, վերլուծությունը և ամփոփումը:
Եզրակացություններ	Ներկայացվում են եզրակացությունները, որոնցում ամփոփվում են աշխատանքի արդյունքները:
Օգտագործված գրականության	Նշվում է միայն այն գրականությունը, որն օգտագործվել է աշխատանքը շարադրելիս, և որին համապատասխան հղումներ են արված:
Հավելվածներ	Առկայության դեպքում կցվում են աշխատանքին:

5. ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

5.1. Հետազոտական աշխատանքը պատրաստվում և ներկայացվում է Հավելված 1-ում ներկայացված ժամանակացույցին համապատասխան ժամկետներում:

5.2. Հետազոտական աշխատանքը դասախոսին է ներկայացվում համակարգչային շարվածքով՝ տպագիր և էլեկտրոնային տարբերակներով՝ պահպանելով հետևյալ պարամետրերը.

1. թղթի չափսը՝ A4 (210 մմ x 297 մմ), լուսանցքները՝ ձախից 3.0 սմ, աջից՝ 1.5 սմ, վերևից՝ 2.0 սմ և ներքևից՝ 2.5 սմ,
2. նյութը տպվում է թերթի միայն մեկ երեսին,
3. տեքստը մուտքագրվում է «Յունիկոդ» (Unicode) կոդավորման համակարգի տառատեսակների կիրառմամբ,

4. վերնագրերը և տեքստը շարվում են 12 pt տառաչափով, միջտողային հեռավորությունը՝ 1.5,
5. յուրաքանչյուր գլուխ սկսվում է նոր էջից, գլուխների վերնագրերը գրվում են թավ (bold) և գլխատառերով,
6. պարբերությունները հավասարեցվում են երկու կողմերից, սկսվում են 1 սմ խորքից:
7. աշխատանքի բոլոր էջերը, ներառյալ հավելվածները, համարակալվում են ներքևում՝ կենտրոնում, համարակալումը սկսվում է բովանդակությունից, որը համարվում է 2-րդ էջ:

5.3. Աշխատանքում առկա աղյուսակները, նկարներն ու գծապատկերները, հավելվածները և այլն համարակալվում են, և դրանց տրվում են անվանումներ (անհրաժեշտության դեպքում տրվում են նաև ծանոթագրություններ): Նկարների, գծապատկերների, գծագրերի անվանումները, նշանակումների բացատրությունները գրվում են դրանց ներքևում, մեջտեղում՝ 10 pt տառաչափով: Աղյուսակների անվանումները գրվում են դրանց վերևում, իսկ հավելվածներինը՝ նոր էջի վերին աջ անկյունում:

5.4. Աշխատանքի վերջում տրվում է օգտագործված գրականության ցանկը, որը ներկայացվում է բնագրի լեզվով: Նախ նշվում են հեղինակ(ներ)ի ազգանուն(ներ)ը և անվան սկզբնատառ(եր)ը, այնուհետև նյութի՝ գրքի կամ հոդվածի ամբողջական անվանումը, ամսագրի լրիվ կամ ընդունված կրճատ անվանումը, հրատարակման վայրը, հրատարակչությունը, հրատարակման թվականը, հատորի և թողարկման համարները, հերթական համարը, էջերը կամ գրքի էջերի քանակը: Համացանցում տեղադրված նյութերի դեպքում կիրառվում են նույն սկզբունքները՝ վերջում նշելով համապատասխան նյութի հղման հասցեն և ծանոթանալու ամսաթիվը (օրինակ, … // URL: http://www.info..., 14.02.2017) (Տե՛ս Հավելված 4):

5.5. Հղումները տեքստում տրվում են ուղղանկյուն փակագծերում՝ ըստ գրականության ցանկում ներկայացված կարգային համարի ([1], [2-5], [3, 7, 9-11], [3, էջ 15], [7, էջ 5-9]) կամ նշելով հեղինակի ազգանունը և հրատարակման տարեթիվը

(Պողոսյան, 2015; Պետրոսյան և այլք, 2010), կամ տողատակում, ինչպես ներկայացված է օրինակում[1]:

5.6. Հետազոտական աշխատանքի շարադրանքի նվազագույն և առավելագույն ծավալները սահմանում է դասախոսը՝ ելնելով տվյալ դասընթացի առանձնահատկություններից:

6. ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ

6.1. Հետազոտական աշխատանքը գնահատվում է դասընթացը վարող դասախոսի կողմից՝ յուրաքանչյուր կիսամյակի 16-րդ շաբաթվա ընթացքում:

6.2. Դասընթացի շրջանակում կատարված հետազոտական աշխատանքի արդյունքը հաշվի է առնվում տվյալ դասընթացի արդյունարար գնահատականում որպես երկու ընթացիկ քննություններից երկրորդի գնահատական:

6.3. Հետազոտական աշխատանքը գնահատվում է ինչպես անհատական, այնպես էլ խմբային աշխատանքների կատարման արդյունքում: Վերջինիս դեպքում գնահատումն իրականացվում է դասախոսի կողմից ընտրված գնահատման մեթոդաբանությամբ:

6.4.Հետազոտական աշխատանքի գնահատումը կատարվում է հետևյալ չափանիշներով (Տե՛ս Հավելված 5).

6.4.1. թեմայի արդիականության հիմնավորում և կատարման ինքնուրույնություն,

6.4.2. ստացված արդյունքների հիմնավորվածություն և հավաստիություն՝

6.4.3.ստացված արդյունքների որակական և/կամ քանակական վերլուծություն՝

6.4.4.աշխատանքի բանավոր ներկայացում՝

6.4.5. համապատասխան եզրակացությունների առկայություն:

6.5. Հետազոտական աշխատանքի գնահատման չափանիշներին հատկացվող միավորները՝ ըստ Հավելված 5-ի սանդղակի և դասընթացի գնահատման բաղադրիչներից

[1] Ասլանյան Լ., Ալավերդյան Ռ., Լույսի բևեռացումը և նրա հետազոտումը: Ուս. ձեռնարկ, Երևան, ԵՊՀ հրատ., 2014թ., էջ 53:

հետազոտական աշխատանքին հատկացված առավելագույն միավորի, դասախոսը պարտավոր է ներկայացնել ուսանողներին հետազոտական թեմաները տրամադրելուց անմիջապես հետո:

6.6. Հետազոտական աշխատանքում գրագողության հայտնաբերման դեպքում աշխատանքը գնահատվում է «անբավարար»։

6.7. Հետազոտական աշխատանքի գնահատականը գրանցվում է տվյալ դասընթացի քննական տեղեկագրում՝ որպես երկրորդ ընթացիկ քննության կամ ստուգման գնահատական։

6.8. Հետազոտական աշխատանքի գնահատումը դասընթացը վարող դասախոսի հայեցողությամբ և ամբիոնի իմացությամբ, կարող է իրականացվել այլ դասախոսների մասնակցությամբ:

6.9. Հետազոտական աշխատանքը գնահատելու համար ուսանողի կողմից այն բանավոր ներկայացնելը պարտադիր է:

6.10. Հետազոտական աշխատանքը վերահանձնում չունի։

7. ԿԱՐԳԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ

7.1.Սույնը կարգը հաստատում է ԵՊՀ ԻՄ-ի գիտական խորհուրդը:

7.2. Կարգում փոփոխություններ ու լրացումներ կարող են կատարվել Մասնաճյուղի գիտական խորհրդի որոշմամբ՝

7.2.1. Մասնաճյուղի տնօրենի,

7.2.2. Գիտական խորհրդի անդամների,

7.2.3. Որակի կառավարման հանձնաժողովի առաջարկություններով։

ՀԱՎԵԼՎԱԾ 1

Հետազոտական աշխատանքի պատրաստման և ներկայացման ժամանակացույց

Գործողություն	**Ժամկետներ**
Հետազոտական աշխատանքի թեմայի հաստատում	Յուրաքանչյուր կիսամյակի 3-րդ շաբաթվա ընթացքում
Խմբային հետազոտական աշխատանքի խմբի հաստատում	Յուրաքանչյուր կիսամյակի մինչև 3-րդ շաբաթվա ավարտը
Աշխատանքի առաջադրանքի և վերջինիս կատարման աշխատանքային պլանի (ժամանակացույցի) կազմում, գրականության վերլուծություն/մշակում	Յուրաքանչյուր կիսամյակի 5-6-րդ շաբաթների ընթացքում
Աշխատանքի կատարում և արդյունքների վերլուծություն, աշխատանքի ներկայացում և քննարկում	Յուրաքանչյուր կիսամյակի 7-14-րդ շաբաթների ընթացքում
Աշխատանքի արդյունքների ամփոփում, աշխատանքի հանձնում՝ դասընթացը վարող դասախոսին	Յուրաքանչյուր կիսամյակի վերջին 16-րդ շաբաթվա ընթացքում

ՀԱՎԵԼՎԱԾ **2.**

ԵՊՀ ԻՋԵՎԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ

_____ ՖԱԿՈՒԼՏԵՏ *[14 pt, Bold]*

_____ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ *[14 pt, Bold]*

ԱԶԳԱՆՈՒՆ ԱՆՈՒՆ ՀԱՅՐԱՆՈՒՆ *[18 pt, Bold]*

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ *[30 pt, Bold]*

ԹԵՄԱՅԻ ԱՆՎԱՆՈՒՄ *[18 pt, Bold]*

ԴԱՍԸՆԹԱՑԻ ԱՆՎԱՆՈՒՄ *[18 pt, Bold]*

ԻՋԵՎԱՆ **202_**

ՀԱՎԵԼՎԱԾ 3.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Ներածություն……էջ 3
2. Գլուխ առաջին. ……....էջ 7
3. Գլուխ երկրորդ……էջ 15
4. Եզրակացություն……..…..էջ 22
5. Օգտագործված գրականության ցանկ……....էջ 25
6. Հավելվածներ……..…էջ 28

ՀԱՎԵԼՎԱԾ 4.

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Մենագրություններ

1.1. Ադոնց Ն., Հայաստանի պատմություն, Երկեր, հ. Դ., ԵՊՀ հրատ., Երևան, 2003, 540 էջ:

1.2. Մանանդյան Հ., Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության, Երկեր, հ. Ա. ԵՊՀ հրատ., Երևան, 1978, 608 էջ:

2. Օրենսդրական նյութեր

2.1. ՀՀ Սահմանադրություն, Լույս հրատ., Երևան, 2005, 25 էջ:

3. Հոդվածներ

3.1. Աբրահամյան Հ., Ռուսաստանի դաշնության՝ որպես նոր պետականության կայացման գործընթացը, Բանբեր Երևանի համալսարանի, թիվ1, Երևան, 2000, էջ 15-20:

4. Ինտերնետային նյութեր

4.1. Հայաստանի Հանրապետության կրթության զարգացման 2011-2015 թվականների պետական ծրագիր- www.parliament.am/law docs/190711 HO246havelvats.pdf 15.09.2020

ՀԱՎԵԼՎԱԾ 5.

Հետազոտական աշխատանքի գնահատման չափանիշները, սանդղակը և հատկացվող միավորները

Չափորոշիչներ/միավորներ	Չի համապատասխանում չափորոշիչին	Մասամբ է համապատասխանում չափորոշիչին	Լիովին համապատասխանում է չափորոշիչին
1. Հետազոտական աշխատանքի թեմայի արդիականության հիմնավորում և կատարման ինքնուրույնություն՝ Առավելագույնը 0.5 միավոր			
Հիմնավորված է աշխատանքի արդիականությունը, սահմանված են աշխատանքի նպատակը և խնդիրները: Կատարված է թեմային առնչվող գրականության վերլուծություն: Աշխատանքը կատարված է ինքնուրույն՝ դրված խնդիրներին համապատասխան:	Ընտրված թեման արդիական չէ և չի նպաստում ուսանողների մասնագիտական զարգացմանը: Հետազոտության նպատակն ու խնդիրները հստակ չեն և սահմանված են անորոշ կերպով: Հետազոտությունը ինքնուրույն չի կատարված և չի համապատասխանում դրված խնդիրներին: Հավաքագրված տվյալները ճշգրիտ չեն և ուղղված չեն խնդիրների լուծմանը	Ընտրված թեման արդիական է, սակայն չի նպաստում ուսանողների մասնագիտական զարգացմանը: Հետազոտության նպատակն ու խնդիրները հստակ են, սակայն աշխատանքում սահմանված են անորոշ կերպով: Հետազոտությունը կատարված է ինքնուրույն, սակայն լիարժեք չի համապատասխանում դրված խնդիրներին: Հավաքագրված տվյալները ճշգրիտ են, սակայն ուղղված չեն խնդիրների լուծմանը:	Թեման արդիական է և նպաստում է ուսանողի մասնագիտական զարգացմանը: Հետազոտության նպատակն ու խնդիրները հստակ են և հստակ սահմանված են աշխատանքում: Հետազոտությունը կատարված է ինքնուրույն, սահմանված ժամկետներում և ամբողջությամբ/ լիարժեք համապատասխանում է դրված խնդիրներին: Հավաքագրված տվյալները ճշգրիտ են և ուղղված են խնդիրների լուծմանը
2.Աշխատանքի կատարումը և արդյունքները Առավելագույնը՝2.5 միավոր			
Ստացված արդյունքները հիմնավորված են և հավաստի	Ստացված արդյունքները հավաստի և հիմնավորված չեն	Ստացված արդյունքները հավաստի են, սակայն հիմնավորած չեն	Ստացված արդյունքները հիմնավորված են և հավաստի
Կատարված է արդյունքների որակական և/կամ քանակական վերլուծություն:	Աշխատանքում բացակայում է արդյունքների քանակական և /կամ որակական վերլուծությունը	Աշխատանքում կան որակական ու քանակական տվյալներ, բայց չկա համապատասխան վերլուծություն	Աշխատանքում կատարված է արդյունքների որակական և/կամ քանակական վերլուծություն
Արված են համապատասխան	Աշխատանքի եզրակաց-	Եզրակացությունները և առաջար-	Եզրակացությունները և

եզրակացություններ (նաև առաջարկություններ)	ությունները և առաջարկութ-յունները հիմնավորված չեն կամ բացակայում են	կությունները մասամբ են բավարարում առաջադրված խնդիրներին և հիմնավորված են մասամբ	առաջարկությունները հստակ են և հիմնավորված:
3.Աշխատանքի բանավոր ներկայացում ***Առավելագույնը՝ 2 միավոր***			
Զեկույցում հիմնավորվում են աշխատանքի արդիականությունը, նպատակը և խնդիրները, ներկայացվում են մեթոդաբանությունը, աշխատանքի բովանդակությունը, արդյունքները և եզրակացությունները	Աշխատանքի ներկայացումը ժամանակատար է, զեկուցողը չի ներկայացնում աշխատանքի արդիականությունը, նպատակը, խնդիրները, բովանդակությունը և արդյունքները:	Աշխատանքի ներկայացումը ժամանակատար է, զեկուցողը հստակ չի ներկայացնում աշխատանքի արդիակա-նությունը, նպատակը, խնդիրները, բովանդակությունը և արդյունքները:	Զեկույցողը հստակ հիմնավորում է աշխատանքի արդիականությունը, ներկայացնում աշխատանքի նպատակը և խնդիրները, մեթոդաբանությունը, աշխա-տանքի բովանդակությունը, արդյունքները և եզրակացությունները:
Զեկույցը հստակ է և հետևողական, զեկուցողը կարողանում է փոխկա-պակցված ներկայացնել և բացատրել կատարված աշխա-տանքը, հիմնավորել արդյունքները	Ուսանողը զեկույցը փոխկապակցված չի ներկայացնում և չի բացատրում կատարված աշխատանքը, չի հիմնավորում ստացված արդյունքները:	Զեկույցը հստակ է և հետևողական, սակայն ուսանողը չի կարողանում լիովին ներկայացնել և բացատրել կատարված աշխատանքը, հիմնավորել ստացած արդյունքները:	Զեկույցը հստակ է և հետևողական, ուսանողը կարողանում է փոխկա-պակցված ներկայացնել և բացատրել կատարված աշխատանքը, հիմնավորել ստացած արդյունքները:
Հարցերին և դիտողություններին զեկուցողը տալիս է հիմնավորված և սպառիչ պատասխաններ	Ուսանողը չի պատասխանում տրվող հարցերին:	Ուսանողը տրվող հարցերին չի տալիս հիմնավորված և սպառիչ պատասխաններ:	Ուսանողը հարցերին և դիտողություններին տալիս է հիմնավորված և սպառիչ պատասխաններ:
Ցուցադրական նյութն արտացոլում և պարզաբանում է աշխատանքի հիմնական բովանդակությունը	Ուսանողը ցուցադրական նյութեր չունի, կամ օգտագործում է ցուցադրական նյութեր, որոնք չեն արտացոլում և պարզաբանում աշխատանքի բովանդակությունը:	Ուսանողն օգտագործում է ցուցադրական նյութեր, որոնք մասամբ են արտացոլում և պարզաբանում աշխատանքի բովանդակությունը:	Ուսանողն օգտագործում է ցուցադրական նյութեր, որոնք լիովին արտացոլում և պարզաբանում են աշխատանքի բովանդակությունը:
Հետազոտական աշխատանքում գրագողության հայտնաբերման դեպքում աշխատանքը գնահատվում է «անբավարար»՝ 0 միավոր			
Արդյունարար առավելագույն գնահատականը՝ 4 միավոր			